ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով այն հանգմանքը, որ Մասիս համայնքը իր բնակչության թվով Հայաստանի Հանրապետությունում զբաղեցնում է 4-րդ տեղը /ըստ պետական ռեգիստրի կողմից տրամադրված տվյալների՝ 2023 թվականի դրությամբ այդ թիվը կազմում է 96.875 հազարի, ինչպես նաև հաշվի առնելով 2023 թվականի սեպտեմբերից սկսած տեղահանված արցախահայերի /շուրջ 12.500/ մեծ հոսքը Մասիս համայնք /որոնցից գրեթե 8.457-ը 2024 թվականի փետրվարի դրությամբ հաստատվել են Մասիսում/՝ բնակիչների սպասարկման գրեթե բոլոր ոլորտներում առաջացել են տարբեր դժվարություններ"միայն 2023 թվականի դրությամբ Մասիսի քաղաքացիների սպասարկման գրասենյակ է դիմել 29.000 քաղաքացի /կամ դիմումատու/ հրատապ լուծում պահանջող տարբեր հարցերով, մեծ է եղել նաև դիմումատուների թիվը քաղաքաշինության ոլորտին վերաբերվող տարբեր հարցերով, օրինակ՝ նախագծման թույլտվություն՝ 1164 դիմում, շինթույլտվություն՝ 1122 և հետագիծ նախագծով՝ 52 դիմում:Համայնքապետարանի աշխատակազմը իր առկա ռեսուրսով՝ աշխատակիցների թվաքանակով, չնայած իր անդուլ և բարեխիղճ աշխատանքի, ֆիզիկապես դժվարանում է կատարել իր առջև դրված պարտականությունները ժամանակին և պատշաճ կերպով :

Ուստի առաջարկում ենք համայնքում առկա տարատեսակ խնդիրներին հավուր պատշաճի և որակյալ լուծումներ տալու, քաղաքացիներին արագ և օպերատիվ սպասարկելու, բնակիչների բազմաբնույթ հոգսերին արդյունավետ և ինտենսիվ արձագանքելու, աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել բովանդակային փոփոխություններ՝ համալրել աշխատակազմը ևս 18 հաստիքով՝ 8 առաջատար մասնագետ-օպերատորի և 10-ը գլխավոր մասնագետի՝ ըստ անհրաժեշտ ոլորտները սպարկող: Լիահույս ենք՝ անհրաժեշտ հաստիքների համալրումը աշխատակազմում կնպաստի վերոնշյալ խնդիրների մասամբ կամ ամբողջական լուծմանը: